

Թեան ծանրակշիռ արժանաւորութիւնը և այնպէս յինքն է յանկուցեր Աւրոպական Հայագէտ ուսումնականաց միտքն, որ օր ըստ օրէ նոցա թիւը բազմանում է և կրկնապատկուում Անգղիացւոց, Գաղղիացւոց և Գերմանացւոց մէջ, և այսօր որ և իցէ ուսումնական պատմաբան կամ լեզուագէտ պարտաւոր է քաջ գիտակ լինել Հայոց լեզուին և գրականութեան:

Յաւօք սրտի պիտի խոստովանիմք, որ մեր ընթերցող Հայ հասարակութիւնը գրեթէ բոլորովին անծանօթ է այն բազմահատոր գրուածոց հետ, յորս Աւրոպական գիտութեան լուսով մեկնուած է մեր լեզուի կանոնները և մեր պատմութեան անցքերը, բաց յայդմանէ ուսումնական հիմանց վերայ է գնահատուած և նախադասուած Հայոց գրականութիւնն, որ բովանդակում է իւր մէջ Հայկական կեանքի ոգին և զաղափարը:

Մեք, որքան կ'ներէ մեզ մեր կարողութիւնը կամենալով մասամբ իւրիք մեր այժմեան գրականութեան պակասութեան առաջն առնուլ, ձեռք զարկինք Ս. Մարթէն, նշանաւոր Հայագէտներից մէկի Մեհոպար «իւր լը Արֆէնի» "Յիշատակարան Հայաստանի" գրուածոց թարգմանութեանը, զոր յուսամք վաղ ուրեմն ի լոյս ընծայել Ս. Լջմիածնայ մեր Մայր Աթոռոյ շնորհիւ, իսկ մինչև այդ ձեռնարկեալ աշխատութեան գլուխ գալը, մեք պատուական Արարատի միջնորդութեամբ կաշխատիմք ծանօթացնել մեր Հայ հասարակութիւնը այն մանր յօդուածոց հետ, որոնք երբեմն երբեմն երևան են գալիս Աւրոպացւոց օրագրաց մէջ, և առ այժմ առաջարկում եմք Պ. Բրոսսէ Հայագէտ

Գաղղիացւոյ Պետերբուրգի "Ղեմարան գիտութեանց" նիստում թուլմաս Արժուունոյ պատմութեան վերաբերութեամբ կարգացած փոքրիկ տեղեկագիրը:

Ա. Բագրատունի.

(Ուրախ եմք Պ. Բագրատունւոյ թարգմանութեան համար, և պարտք կըզգամք նոյնպիսի օգտաւէտ հեղինակութիւնքը հաղորդել ի վայելս մերազնեայ ընթերցատիրաց:

Նաև յաջորդ թուով կը հրատարակեմք նոյն Պարոնի յիշած տեղեկագիր յօդուածը:)

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ
(Наглядное обучение)

Մարդս արտաքին տպաւորութիւն ըստանում է ի ձեռն հինգ բնական զգայութեանց. հայեցմամբ, լսողութեամբ, շօշափմամբ, հոտառութեամբ, և ճաշակմամբ, որոնցից առաջի երկուսն են ուղեցուցիչք բարձր հոգեորական տպաւորութեանց:

Չափահաս մարդն փոքր ի շատէ առողջամիտ գոլով արտաքին տպաւորութիւնք շրջակայ առարկայից արագութեամբ ընդունում է և սեփհականում է, որոնցից կաղմվում են նորա մէջ հասկացողութիւն պատճառն որ նորա ներքին հոգեկան հարկեացքը և զօրութիւնն արդէն պարզ են և զօրաւոր: Նա կարողանում է ընդունել ոչ թէ տեսածներն աչքով լսածներականջով և ին. այլ մաքուր հոգեորական առարկայքը մտաց, հասկացողութեան,

ցանկութեանն, զգայութեանց ևն: Իսկ փոքր երեխան սակաւ առ սակաւ ընդունում է տպաւորութիւնքն միայն այն առարկայից, որոնք շատ անգամ տեսնում է, լսում է կամ առհասարակ այն առարկաներից որոնք գոնե մէկ արտաքին գործի տակ ընկած լինում են: Ըստ հետեւութեամբ կարելի է երեխային սովորցնել արտասանել շատ և շատ բառեր, այլ նա չի հասկանայ նորանց նշանակութիւնը, միտքը մինչև չտեսնէ աչօք, չլսէ ականջօք նշանակեալ առարկայն կամ թէ ուրիշն, որը նման է նորան: Պէտք է որ երեխան երկար հայէ իրն, յակէ տեսութեամբ, որ կարողանայ նորանից ուղիղ և պարզ յանդիմանութիւն կամ նկարագրութիւն ունենալ: Աւրեմն երեխայի մտքումը պէտք է տպաւորվին պարզ ուսեալ երկար տեսութեամբ հետք առարկայից, որոնք միաւորուելով լինում են լուսաւոր պատկեր մի և ընդ նմա ծագում է նորա մէջ կամ սկիզբն է առնում առաջի հասկացողութիւն առարկայից: Այլ է երեխան չի ունենում բաւական երկար տեսութեամբ կազմուած հետք այն առարկաներից, որոնք նա տեսնում է, լսում է, շօշափում է ևն. նա չի կարող ևս ունենալ ուղիղ և պարզ նկարագրութիւն այն առարկայից, ուրեմն նորա հասկացողութիւնն չի պէտք է պարզ և ուղիղ լինին, թէև ըզգայութեան գործիներով ստանում է առաջի յանդիմանութիւն կամ գիտութիւն նորան շրջապատեալ առարկայից:

Ծանր աշխատանքը սկզբնական ուսումնատուութեան, որ զաճեցուցանում է երեխայի անզօր և նուազ հոգեկան դիմումքը, սկիզբն տալով առաջի ընդունելու-

թութեան ճառագայթացն, մենք ոչ ունենք կարողութիւն կատարել, եթէ չկամենար հաղորդել մեր դաստիարակ տիեզերքն: Աստալիս է մանուկին առաջի տպաւորութիւնն որ սակաւ առ սակաւ երեխան սեփհականում է դեռ ևս անզօր հոգոյ զօրութեամբ և ապա սկզբնական դաստիարակութիւնն ուղղում է երեխայի ըստ մեծի մասին սխալ ընդունած տպաւորութիւն:

Այս սկզբնական դաստիարակութեամբ մենք պէտք է աշխատենք երեխան նախապաշտպանել ուժգին և սաստիկ տպաւորութիւններից, որոնք ոչ են ըստ կարեաց և քաջառու մտաց նորա, և զօրացուցանել նորա զգայարանաց գործիներն, որ նորանք կարողանան արտաքին տպաւորութեանց ուղիղ և առողջ առաջնորդք լինել: Իայց երբ ժամանակ երեխան սկսում է համարձակ թոթովել և որոշակի երեխայական թոթովմամբ արտայայտել արդէն ունեցած յանդիմանութիւնքը և հասկացողութիւնքն և խնդրում է մեզանից բացատրել, տալ պատասխան նորա զարթեալ ուսումնասիրութեանն, յայնժամ մենք ի հարկէ լի առողջամիտ յօժարութեամբ և սիրով պէտք է պատասխանենք նորա կոչմանն:

4—5 ամեայ մանուկն ունենում է արդէն յանդիմանութիւնք իւրեան շրջապատեալ առարկայից, որոնք միշտ տեսած է, լսած է, որոնք զգայութեան գործիներով հաղորդած են նորան տպաւորութիւնք: Իայց այս յանդիմանութիւնքն առհասարակ պարզ չին և երբեմն բոլորովին սխալ են լինում: Արդ երեխան ըսկսում է շարժմամբ երեխայական թոթով-

մամբ և գործողութեամբ ցուցանել այն, որ կազմուած է և ձևացուցուած է նորա հոգոյ մէջ: Միով բանիւ նա առանց խորամանկութեան և միամիտ սրտիւ յայտնում է բոլոր իւրեան միտքն, կամեցողութիւնն, հասկացողութեան զգայութիւնն, որպէս կազմուած են նորա մէջ: Քաղենք օգուտ այս երեխայի բարետու անկեղծութիւնից, որ տալիս է մեզ երեխայական մաքուր բնութիւնն, հետեւենք ճշմարտապէս ցուցման նորա և աշխատենք առողջ և ուղիղ պարզել, լրացուցանել, հիմնաւորել և խորացուցանել յայտնապէս արտայայտեալ երեխայի հասկացողութիւնն, նորա կամեցողութիւնն զգայարանքն, ընտելացուցանենք նորա յայտնեալ միտքն բարձր և պարզ ձայնով: Իսկ յետոյ սկսելք աստիճան առ աստիճան ընդարձակել և բազմացուցանել ուսանողի հոգեկան ըստացուածքը:

Մենք ասացինք արդէն, թէ ամենայն տեսիլքն հոգոյ, որոնք երեխայի մէջ յօրինուում են շրջատեալ իրերից պարզ չեն լինում և ըստ մեծի մասին սխալ են, եթէ կամենանք հեռացուցանել երեխայի հոգոյ պատկերաց պակասութիւնք անձիշտ հարկաւոր է այն իրն տալ երեխային, որ նա երկար հայէ, շօշափէ և լն. և այս ձևով կարողանայ նա մտքումը ունեւալ առարկայի պարզ և ուղիղ պատկերն, ուղղացուցանելով իւրեան առաջուայ սխալ գիտութիւնն: Այս ձևով պարագումն աշակերտաց հետ անուանում են հայեցողական դասատուութիւն (наглядное обучение):

Ըստ կարեաց մեր բացատրեցինք ըսկզբնական ուսանելոյ կարեւորութիւնն՝

որ պահանջում է մարդկային բնութիւն կամ մտաց զօրացման օրէնքը: Արդ մի ըստ միոջէ զնենք հայեցողական ուսումնատուութեան էութիւն: Հայեցողական ուսումնատուութիւն է նախակրթութիւն առարկայից ամենակոյս նկատմամբ: Աս ուսանողի միտքը դարձուցանում է առարկայի այն նշանների վերայ, որոնք յանդիման են լինում նորա արտաքին զգայարանաց և այս ձևով զիմում է հասանել երկու տեսակ նպատակի: Հայեցողական ուսումնատուութեան առաջին նպատակը նա է որ ծանօթացուցանէ ուսանողն երկրի առարկաների հետ՝ այսինքն՝ նորանց մասանց յատկութեանց, գործողութեանց և փոխադարձ յարաբերութեանց հետ: Արկրորդ նպատակն այն է որ վերոյիշեալ ուսումնատուութեամբ երեխայի արտաքին զգայարանքն պարզել, որ նա կարողանայ միաւորացուցանել իւրեան զգայութեանն գործունէութիւնն ընդ մտածողական, այնպէս որ միաւորութիւնն յարուցանէ երախայի մէջ հակամէտ յանդիմանութիւն և հասկացողութիւն գործողութեանց և յարաբերութեանց առարկայից: Մենք կը սխալուինք բաւերով հայեցողական ուսումնատուութիւն հասկանանք միմիայն ուսումն առարկայից, որոնք կարելի է տեսնել. նորա գիրկն մեծ է, նորա մէջ է մտնում ամենայն առարկայք, որոնք կարող ենք լսել, շօշափել, ճաշակել, իմանալ հոտառութեամբ, միով բանիւ այն առարկայքն, որոնք իմացում են հինգ արտաքին զգայարանօք:

Իսնալով մտաւոր կարողութիւնն երեխայի, կտարեւրագործելով նորա ար-

տաքին զգայութիւնքը և հոգոյ կարողութիւն, ընտելացուցանելով նորա յակամտութիւն՝ դէպ ուղիղ նկատողութիւն և յայտնելով նորան նոր հմտութիւն հայեցողական ուսումնատուութիւն ըստ նմին նպաստամատոյց է լինում բոլորովին բնական ձևով բանալ մարդոյ բանն (լեզուն), դա յարուցանում է մըտաց զօրութիւնն զիմագրում է ուսանողն դէպի դատողութիւնն արտայայտել բանի: Այս պատճառաւ հայեցողական ուսումնատուութիւն՝ բանալով մտաց փականն երեխայի միեւնոյն ժամանակն բանում է նորա լեզուն, ուրեմն այս կերպով ուսանողն մարդվում է խօսակցութեան և մտածողութեան մէջ: Հայեցողական ուսումնատուութիւն յարաբերութիւն ունի ևս ընդ այլ առարկայից զորօրինակ ընդ մատեմատիկականութեան բնական զիտութեանց և ին. ուրեմն ուսանողն պատրաստում է ևս այլ առարկայից մէջ:

Այժմս առարկայքն զննում են ի ձեռն հայեցողական ուսումնատուութեան երկու տեսակ եղանակաւ. առարկայք զննում են կամ առանձին առանձին ընդ յարաբերութեանց նոցա այսինքն ընդ բաղկացեալ նիւթոյ, մեծութեան, նմանութեան, գործողութեան ևն, կամ զննում են շատ առարկայք ի միասին և ապա ըստ միատեսակ որպիսութեանց բաժանում են ի մասն: Առաջի եղանակըն ուսանողին ծանօթացուցանում է յառաջ մի առարկայի հետ և ապա նորա ծանօթութիւն սակաւ առ սակաւ տարածում է ևս այլ առարկայից վերայ: Իսկ երկրորդը ընդհակառակը աշա-

կերտին ծանօթացուցանում է յառաջ ընդհանուր տպաւորութեանց հետ շատ առարկայից և յետոյ զննում է իւրաքանչիւր առարկայ առանձին:

Ամենայն ուսումնարաններում ուսումնատուութիւն հարկաւոր է սկսել հայեցողական ուսումնատուութիւնից և պէտք է գործածել հարցական ձև:

Եթէ ցանկալի է որ հայեցողական ուսումնատուութեամբ ուսանողն սեփհականէ յառաջ ընդհանուր տպաւորութիւնք և ապա իւրաքանչիւր իրն զննէ առանձին, պէտք է վարժապետն նախ՝ անուանէ առարկայքն, նորանց ազդն և ապա աշակերտից պահանջէ զտանել դէմքը, գործողութիւնքը կամ որպիսութիւնք նոցա և զտնուածն բացատրէ: Երկրորդ՝ աշակերտի պատասխանքն պէտք է լինին «արդ, բարձր ձայնիւ և լի առողջարանութեամբ և ոչ թէ առանձին բաւերով: Երրորդ՝ զասատուն պէտք է պահանջէ, որ ուսանողն տեսածն սովորէ ոչ թէ վեր ի վերոյ, այլ կարողութեամբ կատարելապէս և հիմնաւոր: Արովհետև առաջի հարցերն հեշտ են լինում, պէտք է տկար աշակերտաց հարցանել, իսկ դժուարներն առաւել ընդունակ աշակերտաց: Չորրորդ եթէ աշակերտներն կարող են գրել պէտք է սովորածն գրեն և այս ձևով նոքա կ'պատրաստուին ուղղագրութեան համար և այս միջոցին վարժապետն կարող է բացատրել կանոններ զորօրինակ կէտադրութիւնքն, եղակի և յոքնակի թիւքը, զլիւաւոր մասունք բանին քերականութեան և ին. բայց զասատուն չի պէտք է մտանայ որ նորա գլխաւոր նպատակն նա է՝ որ

աշակերտին սովորցնէ մտածել և խօսել: Ընդհանրորդ՝ վարժապետն պէտք է ցոյց տայ զրելու ձևն, սորա համար դասատունն զրուժ է դասատան տախտակի վերայ հարց և պատասխանն նորան տալով օրինակ և ապա զրուժ է նոր հարցեր և պահանջում է ուսանողից պատասխանել: Այնպէս որդիք՝ սխալներն պէտք է ուղղել:

Իսկ եթէ ցանկալի է, որ առարկայքն զննել առանձին առանձին, յայնժամ պէտք է ի միտ ունենալ վերոյիշեալ կանոններն ևս այսօրիկ:

Նախ՝ ընտրուած առարկայն պէտք է համապատասխան լինի նպատակին. պէտք է զննել ոչ թէ իրն այլ ևս նորա գործողութիւնն, ուրիշն առաջի ժամանա-

կրն պէտք է ընտրել անբաղադիր և յանգուցիչ իր, այլ յետոյ սակաւ առ սակաւ դիմել դէպի առաւել բաղադրեալ առարկայքը: Այնպէս որդիք՝ բացատրութիւնք պէտք է լինին ճշտիւ հետեւաբար և տրամաբանական որ գլխաւոր և երկրորդ կարգի մասերն, որպիսութիւնքն, 'գործողութիւնքն լինին կատարելապէս պարզ և հասկանալի: Այնպէս որ եթէ ցանկալի է շուտ և լաւ հասանել նպատակի պէտք է միշտ գործածել միևնոյն տրամաբանական կարգը և հարկաւոր է աշխատել որ աշակերտն հասկանայ և սեփհականէ դասառութեան կարգն ոչ թէ վեր ի վերոյ այլ հիմնաւոր:

Թարգ. Ստեփան Օրբելի

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՀՐԱԹԵՇՏ ՎԱՐԴԱՆԱԵՑ ՄԱՄԻԿՈՆԷԻ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ ՆՈՐԱ ԵՐԱՆԵԱԿ ՏԻԿՆՈՋ 1):

Վարդան:

Բարեաւ մընա՝ անդուգական իմ անձկալի կողակից.
 Կենցաղական ճանապարհիս հաւատարիմ ուղեկից.
 Ինձ հրաւեր եկաւ Ազգէն՝ որ ժողովուրդ է ի մարտ.
 Իմ և փոքր ինչ ուշանալս՝ զիս տի առնէ դատապարտ:
 Երբ ձմեռը արձակեցի ուխտապահք զօրքն իւրեանց տուն.
 Միւսանգամ ժողովուրդի զրինք պայման հաստատուն,
 Բարեկենդան կատարեցինք, և աղուհացք անցուցինք,
 Մեր ընտանեաց, ազգականաց Գրիստոս յարեաւ ասացինք:
 Պարտից զօրքը ըսկսել են Փայտակարան երևել,
 Սիւնեաց իշխանն պիտի ջանայ այն բանակի մէջ լինիլ.

(1) Առ ի չգոյէ գրեանց՝ վարդանայ կնոջ անունը չկարոցի ստուգել. դիտեմ որ չէր երանեակ: